

Տարօնի ժողովրդական երգեր

ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Հետեւեալ ժողովրդական երգերը հաւաքուած են մեծամասնութեամբ՝ 1951 թ.-ի ամրան, դէպի Սուրիա կատարած ազգագրական նիւթերու հաւաքման մեր երկամսեայ արշաւին ժամանակ։ Փորձած ենք մեր կարելիութեան սահմանին մէջ, գրի առնել եւ կորուտէ վրկել ինչ որ արժէք կը ներկայացնէ։ Ուրախ ենք որ անհատներ սիրայօժար կերպով մեզի երգած են, ինչ որ տարիներու թաւալումը անաղարտ ձգած է իրենց մտքին մէջ։

Պահած ենք երգերը այն ձեռով որ մեզի աւանդուած են, առանց մեր կողմէ փոփոխութիւններ, յաւելումներ եւ յապաւումներ կատարելու։ Այս՝ նախ այն պատճառով որ մեր իրաւասութեան սահմանին դուքս է, եւ երկրորդ՝ այն մտածումը թէ ժողովրդական ստեղծագործութեան բոլոր պատառիկները պէտք է գրի առնուին, որպէսզի մենք ունենանք նոյն այդ բանահիւսութեան ու անկէ ալ զայն ստեղծագործող ժողովուրդին ամբողջական հոգեբանութիւնն ու նկարագիրը։ Աևէ ահա մեր հաւաքածոյին մէջ գոյութիւնը երգերու, ուր կարելի է հանդիպիլ անէծքներու եւ սահմաններէ դուրս նկատուող ասութիւններու։

Մեր հասկացողութեան սահմանին մէջ՝ կեղծ եւ ժողովրդական բանահիւսութեան անհարազատ տողեր ու երգեր դուքս ենք ձգած մեր հաւաքածոյին։

Երգերուն բովանդակութենէն թելադրուած դասաւորում մը թերեւս թուի աւելի պատշաճ եւ գիտական, սակայն կը գոհանանք այս անդամ ներկայացնել մեր հաւաքած երգերը տալով իւրաքանչիւր անհատէ մեր հաւաքածը։ Նիւթի այսպիսի բաժանում մը այն մտադրութեամբ որ խուսափինք ամէն անդամ կրկնելէ հաղորդուլին անունը։

Զմոռնանք յիշել նաեւ թէ հոս հրատարակուած երգերը դրեթէ
ամբողջութեամբ նոր է որ լոյս կը տեսնեն : Թերեւս դանուին տողեր
կամ տուներ , որոնց կարելի է հանդիպիլ այլ հրատարակութեանց
մէջ , սակայն անոնք տարբերակներ ըլլալով , առած ենք զանոնք մեր
հաւաքածոյին մէջ :

Նախ կու տամբ Խնուսցի Գարեգինէն մեր գրի առած երգերը :
Դրի առնուած են Հալեպ , 14-15 Սեպտ .ի , 1951-ին , եւ վերատեսու-
թեան ենթարկուած ու յաւելումներ կատարուած՝ Պէյրուր , 29 Մար-
տի , 1952-ին :

Գարեգին Մկրտիչեան՝ Խնուսի (Հարք) Քաղիկի գիւղին : Հօր
անուն՝ Միասկ : 1951 թ .ին 55 տարեկան էր եւ կը բնակէր Լաբարժան (Սուրիա) : Արտակարգ յիշողութեան տէր մէկն էր :

ՀԱՊԼԻՊԱՆ

Հապլիպան , քնայ ու էրած
տեսայ ,
Կանանչ ու կարմիր քիսայ ,
Գնա հօրըդի խօսա' ,
ինէ զիս ուրին փեսայ :

Հապլիպան ընկայ ըստ առուի
յեղին ,
Զուկոտ ճէյրան բուրդ կը գըզին ,
Մեղքը տէրտըրո՞ջ վըզին :

Հապլիպան , Խամըր բերդը տոռն
ունիմ ,
Մըջ երկաթէ սուն ունիմ ,
Քառսուն քու պէս չուն ունիմ :

Սարու չայիր քաղ կ'էնենք ,
Եարս եկաւ ախ կ'էնենք ,
Հապլիպանէ օյ , օյ , օյ ,
Սինամ սարերով օյ , օյ :

Հապլիպան ջանէ ջան ,

Ջանըս քըզի զուրպան ,
Էկո երթանք ճըլոյ խան ,
Մածուն չեղաւ ուտինք թան :
Հապլիպան , աղջի քու անուն
թագու ,
Արի էրթանք մըր սագուն ,
Ողորմի քու հօր հոգուն ,
Զեսս դնեմ քու գոգուն :

1952 թ .ի Զատկին՝ Հալեպ
մեր այցելուրթեան առքիւ գտամբ
հետեւեալ տունը , սայն երգին
պատկանող , Թօփալ Առաքելի
մօտ , զար կու տամբ հոս :

Հապլիպան , ջան է ջան ,
Ջան է ջան . է , ջան զուրպան
Ալուր մաղեցինք մաղերով ,
Զգտիք էփինք եղերով ,
Իմ լէ ճըր պեխերով :
Հապլիպան է օյ , օյ , օյ :

ՊԱՐԵՐԳ

Հինէր նարին էր օյ օյ ,
Հինէր նարին էր օյ օյ ,
Հինարի ծառի վրայ ,

Զինարի ծառի վրայ ,
Դըրեր էր Փաս ու բուքուլ ,
Շէկիկ ծամերու վրայ :

Հինէր նարին այներ էր,
Պատի տակը կայներ էր,
Հինարի ծառի վրայ, եւլն.։
Արի մըր տուն ու գընա՛,
Դու կրակ էրէ մահանայ,

Դուռ դրացին չիմանայ.
Հինարի ծառի վրայ, եւլն.։
Բարտի ծառին ել ունեմ,
Լրանդ ըրանդ թել ունեմ.
Հինարի ծառի վրայ, եւլն.։

ՍԱՐԵՐ ՏԷՆ

Սարեր տէն գնացէք՝
Տեսնեմ զիմ եարս :
Սարեր տէն, ձորեր տէն գնացէք՝
Տեսնեմ զիմ եարս :
Արազը պուղ է բռնի,
Գանգուլս թող է բռնի:
Արազը պուղ է կարի,

Գանգուլիս թող է թափի :
Սարեր տէն, ձորեր եւլն.։
Կոռունկ թոաւ մըր արտէն,
Առաւ զներքի ջահտէն,
Տարաւ մըր սէր ու սաւտէն :
Սարեր տէն գնացէք,
Տեսնեմ զիմ եարս :

ԶՈՒՆ ԷՐ ԷԿԻ

Զուն էր էկի սարերուն,
Հալէր կաթէր քարերուն,
Եարուկն էրթէր ջրերուն,
Կըլկըլէր մըջ կըժներուն,
Էլնէր եարոջ փիճանուն (կամ
բիճերուն) :

Սարէն պլծայ էկայ ցած,
Իշի գուռը կիսաբաց,
Մտայ ներս առնենք թաժայ հաց,
Թերմաշ թուլէն զիսի խած,
Բնծի ինչ խածնել պիտէր,
Բնծի գիրկ ու ծոց պիտէր :

ԵԱՐԾՄ ԿՕՐԱՆԻ

Բոստան իմ ցանի էտա դարու
կող, Անտէր մընէր եար, էտա արտ
ու հող, Զեղաւ մէկ շամամոք զրկենք
եարոջ փոխ :

Բոստան իմ ցանի ելեր է պառկի,
Պղտիկ իմ սիրած եար, չըմ կընայ
թարկի, Զարութեն կ'էնէ չըմ կընայ
զարկի :

ԱՆԷՄՔ

Անիծիմ անենաս,
Խրպիս ու գողենաս,
Բետ բետ ցամերու տիրանաս :
Էլնաս հաւէն,
Ջրթաս խժիժման թաւէն,

Չըրծնաս քու մայվան ցաւէն :
Գետին բոց էղնի,
Քու օտքերու տակ էղնի,
Քու ոըսի սեւ աղուէսու
պառեկին էղնի :

ՔԱՄՄԻՆ ԷԿԻ

Քամին էկի էրան-էրան,	Ես իմալ ենք քու սիրուն,
Քըշեց տարաւ Մըշոյ բերան,	Մեղքեմոմ տաս դէմ գոլուն.
Մըշու հաւեր թեւաւորուան,	Իմալ էնիմ, եւլն.:
Մըշու քոջեր սեւաւորուան(1):	
Իմալ էնիմ, իմալ էնիմ,	Դու պղտիկ էր քեզ սիրեցի,
Եար պղտիկ էր շիւար էղնիմ:	Դու մեծցեր էր՝ հասրաթ մանցի.
Զուն էր էկի աշնան արտեր,	Իմալ էնիմ ջարայ չկայ,
Իմալ էնիմ ես քու տարտեր:	Կը կարգուիմ փարա չկայ.
Իմալ էնիմ, եւլն.:	Իմալ էնիմ, իմալ էնիմ,
Զուն էր էկի լափայ-լափայ,	Եար պղտիկ էր շիւար էղնիմ:
Ես քու տարտէն հալայ թափայ.	
Իմալ էնիմ, եւլն.:	

ՓԱՓՈՒԽԻ

Հէլ հէլիէ, հէլիէ	Եար հէլիէ հէլիէ,
Հէլ հէլիէ, փափուռի:	Եար հէլիէ, փափուռի:
Փափուռի շապիկ շիլայ,	Այլ տարբերակներ են.
Փափուռ նստի դուռ կ'իլայ,	Նշխուն ջոկիկ մըջ եղին,
Եար հէլիէ հէլիէ,	Եարս տարան մըջ գեղին:
Եար հէլիէ, փափուռի:	Կամ՝
Եարըս տարան մըջ գեղին,	Հեղին տարան մըջ գեղին,
Դուռ դրացիք կը նեղին.	Թափան խորթեր կը դեղին:

ՍԻՐԵՐԳ

Ուխտ մ'ենք կտրեր կ'էրթէնք Մըրք Սարգիս,
 Զըն տըղէն առնենք անուն էր Սարգիս.
 Սարգիս ջան Սարգիս, ծառ չինար էղնիս,
 Թէ օր զիս առնիս շատ տարի ապրիս,
 Թէ օր զիս չառնիս, բէմուրազ մըռնիս:

1) Զարրորդ տաղին տեղ երբեմն կ'երգուի նաև Բոթկանց տըներ սեւա-
 ւորուած:

Ծառէն ինք քաղեր տըսւերկու ճիրան,
Զըն տըղէն առնենք անուն էր Միհրան.
Միհրան ջան Միհրան, եւլն.:

Հաւէն ինք քաշի տըսւերկու թեպուր,
Զըն տըղէն առնենք անուն Խաչատուր, եւլն.:

Ուխտ մ'ենք էրի կ'էրթէնք Սըրբ Կարապետ,
Զըն տըղէն առնենք անուն Կարապետ, եւլն.:

ԲԱՂԼՄԻ

Դուն ուստ կու զաս դուն Խասդեղու, բաղլմի
Պագիկ մը տուր տանիմ տեղու, բաղլմի:

Դուն ուստ կու զաս դուն Խըլաթայ, բաղլմի
Կարմիր էրես արուն կը կաթայ, բաղլմի
Պագիկ մը տուր տամ զօլաթայ, բաղլմի
Բաղլմի պաղջայըմի,
Կիւլմի պիւլ պիւլըմի,
Սարըմի սիւմպիւլըմի:

Դուն հագեր էր կարմիր ճուպէն, բաղլմի,
Ելի կայնի տանքի խուպէն, բաղլմի,
Ինչ օր կ'էնէր քաք պապ նուպէն, բաղլմի:

ՊԱՐԵՐԳ

Հուն չունիս եար ջան,
Տուն չունիս եար ջան:

Հագեր էր Փըստան,
Գացեր էր պոստան.
Հուն չունիս, եւլն.:

Հագեր էր սօլեր,
Գացեր էր կօլեր.

Հուն չունիս, եւլն.:

Հագեր էր ճուպէն,

Կայներ էր խուպէն.

Հուն չունիս, եւլն.:

Թինջինով ըլիս,

Դու հորթուն կ'ըլիս.

Հուն չունիս եար ջան,

Տուն չունիս եար ջան:

ԿՈՎԱՆՏ

Հա գլորի վարի վարի,
Տէ գլորի շուտ շուտ արի:

Եարըս մարան մըջ գեղին,

Դուռ դրացիք կը նեղին.

Հա գլորի, եւլն.:

Գացի գացի հեռցայ,
Խամըր բերդին մօտեցայ.
Հա գլորի, եւլն.:

Աղջիկ անունդ Սարէ,

Քու աչքեր խառ ու մառ է.
Քու տարտեր զիս կը վառէ.
Հա գլորի վարի վարի,
Տէ գլորի շուտ շուտ արի:

ՄԱՐ, ՄԱՐ

Սար, սար իմացէք
Տարտերս շատ ին դիմացէք:
Սարեր ձորեր հով էրէք,
Իմ տարտին տարման էրէք:
Արի մըր տուն ու գընա',
Դուռ դրացին չիմանայ:
Սար, սար եւլն.:

Էրդրում շարսու պազար,
Իշնատէ պիր զըզ կազար,
Ալինտա տիվիթ խալամ,

Օթըրմըլ տարտըմ եազար:
Սար, սար եւլն.:

Ի՞նչ է էս սէր ու սաւտան,
Թողիմ կորիմ քու տարտէն:
Սար, սար եւլն.:

Սրտիկ մալուլ մը կենայ,
Տունէն մարդու չը մընայ.
Սար սար իմացէք,
Տարտերս շատ ին՝ դիմացէք:

ՄԷՄԶԱՐԵ

Մէմզարէ, հա' Մէմզարէ.
Թունտիր վառիմ, փոշին հանիմ,
Էտ ինչ խըշիմ կնիկ մ'իմ ես:
Կուժը շառած ջուրի կ'երթամ,
Էտ ի՞նչ խըշիմ եւլն.:

Խըմոր չեղած հաց կ'երիմ,
Էտ ինչ խըշիմ, եւլն.:

Քըթոց շառած կաթ կը կըթիմ,
Հա Մէմզարէ Մէմզարէ:
Թունտիր վառիմ ցան չկայ,

Փըլաւ կ'էփիմ եղ չկայ,
Տոլմա փաթթիմ թուփ չկայ,
Հա' Մէմզարէ, Մէմզարէ:
Մէմզար գացի խիարնոց,
Խիար գոմեց լրցեց ծոց.
Հա Մէմզարէ, Մէմզարէ:
Մէմզար գացի հէրանց տուն,
Ե՞րբ միտք կ'իգայ դպոնայ տուն,
Ճըթեր մանցած ին անքուն.
Հա' Մէմզարէ, Մէմզարէ:

ՈՍՊ ՃԱՄԵՑԵՐ

Ոսպ ճարեցէք պասն էկաւ,
Շընկշընկալէն հարսն էկաւ:
Դուռ բաց բարի մարդ էկաւ
Հինգ լանկառի վարդ էկաւ:
Ոսպ ճարեցէք, եւլն.:

Քու գալդ ընծի բարի,
Ըսիմ պար, չըսիմ պար,
Գետին դառնայ դուքուդար:
Ոսպ ճարեցէք, եւլն.:

Խուկի բաղարջ ու հատիկ,

Բարով իդայ մըր Զատիկ :
Ոսպ ճարեցէք, եւն :

Տէրընտէս, դարման ու կէս,
Առնինք չուան վազինք դէղ,
Միջինք էր Մեծ Պասի կէս :
Ոսպ ճարեցէք, եւն :

Փոթորիկն էր թոման,

Մառզարդարին դարձ կը տանին,
իտի շարաթ քարքաշան,
Ճըժեր հալան ու մաշան :
Ոսպ ճարեցէք, եւն :

Մառզարդարին դարձ կը տանին,
Փեսի հոգին կը հանին :
Ոսպ ճարեցէք պասն էկաւ,
Զընկընկալէն հարսն էկաւ :

ԽԱՂԵՐ

Այս տնուան տակ կու տաթէ
մանկական խաղեր :

Բիրէն էկաւ Խըլաթայ,
Եղն ի վրէն կը կաթայ,
Հնիմ հալուայ ու կաթայ,
Ամէկին մէկ ու մէկ,
Իմ տղին հազար ու մէկ :

Հէլ հէլ, Մորայ հէլ,
Ալի խօճէն ուլ մը գնեց,
Դանկով մորթեց, չախուով
Գացէք ըսէք լակլակ բաշուն,
Իղայ քերթէ ոռու կաշուն,
Տանէ ձղէ իր բայ ճաշուն :

ՄԸՍՄԸԼԼԼԷԿ

Մըսմըլլէկ, ջան մըսմըլլէկ,
Մըսմըլլէկ, հէչ պալէթայ,
Պավէթայ զըր հավուայ,
Խըլաթըն պաշ իւստունա,
Պաշն ի տիվան իւստունա :

Զընկ, չընկ ու չարխանայ,
Քու պապ բռնեց պարխանայ,
Պարխանի բեռներ բինուկ,
Քու զոջկայ թաթեր հինուկ :

Գացի մտայ եղի մը դոմիկ,
Գտայ եղի մը բղիկ,
Զարկի գետին կոտրեցի,
Կանթն ի փէտէս էձգեցի,
Տարայ Սանամօր էրթկէն
կախեցի .

Սանամէր սան ծակն ի վեր,
Քաւորկին քար ծակն ի վեր :

ԲԵՐՉԵՆԻ

Տիգօ, Տիգօ Բէրգէնի,
Տարայ Տիգօ Բէրգէնի :

Ասիկ Տիգօ խայտէն է,
Կաղզուայ ձորէն է :

Տիգօն էկաւ սեւ Քրից,

Փորն էր ուռի ձմերկից :
Տիգօն գնաց քեռու տուն
Քեռին ըստաւ քութայ շուն :

Տիգօն դացի գըրգըկի,
Վախնամ դլուխ չըրգըկի :

ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր Մեր էրկին ու վըկայ,
Պատայ գետն ու սըկայ,
Ելայ փուլն ու լըկայ:

Հայր Մեր էրկին հայտա տըր,
Սբ. Եղիշին չայտա տըր,
Ինչ որ ուտիս Փայտա տըր:

Առուէ առու իմ թոեր,
Քառսուն կաքաւ իմ թոներ,
Համպրովի թառն իմ գրեր,
Համպրեցի մէկ պակաս էր.
Առայ բերանս լեզի էր,
Թալի գետին դինի էր.
Գինի դինի դինստան,
Աղբէր մ'ունիմ Շահարըստան,
Թաւթա շապկի կարող էր,
Մանաըր հընի շարող էր:

կամ

Աղբօրս ձին է բրծի,
Զափար խոտերն է ընկի:

Արէք տեսէք զԱստծու բան,
Տաս տուն լծած մէկ դութան,
Ամէկու տուն չկար գթալ մը թան,
Օր իտեն ուրանց դրան շան:

Էլնամ ծառը զարդարուիմ,
Իջնամ տակը միխթարուիմ,
Հաւու վառեկ մը մորթիմ,
Տանիմ գետը լուանամ,
Էփիմ ու տամ չօպանին,
Զօպան ինձ տայ մէկ ոչխար,
Ոչխարը տամ Աստծուն,
Աստուած ինձ տայ մէկ աղբէր,
Աղբէր, աղբէր, զան աղբէր,

Զանը քըղի մատաղ,
Կապեր իմ կապ է էկեր,
Պուղմայ իմ խոջ է էկեր,
Ճնճղու լեզու քու համար,
Մեղրով իմ տապակեր:

Եք է, տուք է տըրմըզան,
Շամըր մամըր քոքոզան,
Օսկի նուկին ըլպապան,
Մըխտէ կոճակ,
Տուք պըլոճակ,
Ճան, արի', ճուկ:

Տօ' տղայ, լաօ', հօրիք քշէ,
Կիտուր թափաւ գետին իշէ,
Աչքերդի բաց ամպեր իշէ,
Զալօն շեղ էրէ, Պաշօն քշէ,
Ակօն ծըռաւ շիտակ քշէ:

Ալէքսան ուր փեսան,
Ութ գերընդի, տաս լեսան,
Զարկեցին ու զարնըւան,
Բարդէ'մ պակաս էր քըսան:

Գառն ու մաքին խառնինք իրար,
Առնինք զիէտեր զարկինք իրար:

Ծռեր իմ էղի սաւտայ,
Էղ քաք պապեր չըն հաւտայ:

Քիլան էկան շարուէ շարան,
Կրտէ Մընօ Խօլօն տարան,
Կրտէ Մընօն էլաւ գնաց յետին,

Դըտաւ պոչիկ զարկեց գօտին,
Ըստ մեռնիմ քըղի, քու անուշ

ԱՆԷՄՔ

Հօտին, Հոդոց հանդուցելոց,
Օրի պառկար ըստ չոր գետին,
Բռնիմ ձեռքդ թալիմ փողոց,
Էրթանք մըն տուն պառկի վըր
Վրէդ վասիմ կրակ ու բոց.
բալայ խոտին: Դուն ըսէ ամին:

Հետագայ երգերը գրի առնուած են Ազնիւ Սեւոյեանէ, Լարաֆիա, 22-23 Սեպտ.ի, 1951-ին:

Ազնիւ Սեւոյեան՝ Ախլաքի Սովորք գիւղէն: Հօր ամուն՝
Աւետիս, մօր ամուն՝ Ասուկ: 1915 թ.ին հինգ տարուան հարս: 1951
թ.ին 60 տարեկան էր եւ կը բնակէր Լարաֆիա:

ՈՂԲԵՐԳ(2)

Տարտ օյ օյ, տարտ օյ,
տարտ օյ օյ,
Մուրատ գետ ին կապած
պանտեր,

Տարտ օյ, օյ,
Ես քէ կ'առնենք չթոր տարտեր,
Տարտ օյ, օյ:

Մուրատ գետ խոշ Մուրատ գետ,
Տարտ օյ, օյ,
Թորիմ էրթամ Հարենից ետ,
Տարտ օյ, օյ,

Պամէնէ Ռուրէն թո բերէիր հետ,
Տարտ օյ, օյ:
Մուրատ գետ կապած քալաք,
Տարտ օյ, օյ,
Ես քէ կ'առնենք չթոր Փալաք.
Տարտ օյ, օյ:

Աստուած սիրէք իմ հօր չլուէք
Ոչս Պետրոս,
Տարտ օյ, օյ,
Իմ ընկերն էր ընկած ըռէզ,
Տարտ օյ, օյ:
Աւար թալէք Սըրբ Յովհաննէս
Տարտ օյ, օյ,
Պաւէի Սըրբ Յովհաննէս չարա
կ'ընէ,
Տարտ օյ, օյ:
Աղջի Խանօ, Աստուած սիրես,
Տարտ օյ, օյ,
Իրեք տարի էրիկ չէնես,
Տարտ օյ, օյ,
Մէկ Մուքէիս խաթըր էնես.
Տարտ օյ, օյ:

2) Դէպքը կը պատահի Ախլաքի Թեղուու գիւղին մէջ: Ռուրէն ամունավ զիւղացի մը երբ լեռնեն սայլով ցորենի դէզեր կը բերէ, սայլը կը շրջի եւ Ռուրէն սայլին տակ մելառվ կը մեռմի: Ռուրէն որդին է Հարկէ Պետրոսի, իսկ երգին մէջ յիշուած Մուշէն՝ որդին Ռուրէնի:

ՕՐՈՒ

Օրօր էնիմ քընացընիմ, տարտ օյ, օյ,
 Շաքարով շարպաթ իւլմցընիմ, տարտ օյ, օյ,
 Աչքեր պաղիմ քընուց արթնցնիմ տարտ օյ, օյ:
 Աշուն էր՝ դառնար դարուն, օյ, օյ,
 Զուն էր հալեր վըր սարերուն, տարտ օյ, օյ,
 Ճամբան բացուեր զարիպներուն, տարտ օյ, օյ:
 Քու երթալդ եղաւ քանի՛ տարի, տարտ օյ, օյ,
 Աստուած քու գալդ դարձնէ բարի, տարտ օյ, օյ,
 Նամակ դրիմ էլիր արի, տարտ օյ, օյ:

ՓԱՓՈՒԽԻ

Ամպ էլաւ ամպի նման,	Գիշերուան զանգեր զարկին,
Նարինայ նիր փափուռի,	Նարինայ, եւլն.:
Շաքար իս խանտի նըման,	Սանամ Պէզօն մէկտեղ ին,
Նարինայ նիր եւլն.	Նարինայ, եւլն.:
Եար փշրէ թալէ բերան,	
Նարինայ, եւլն.:	Աղջիկ քու անուն Սարէ,
Փափուռի վիլ ու վիլայ	Նարինայ նիր փափուռի,
Նարինայ..... եւլն.	Քու ծամեր խառու մառ է,
Փափուռ նստեր տուն՝ կ'իլայ,	Նարինայ, եւլն.:
Նարինայ...	Քու բերան կրակ կը վառէ,
Փափուռի շապիկ շիլայ,	Նարինայ, եւլն.:
Նարինայ, եւլն.:	Քու տարտեր զիս կը վառէ,

ԿՈՒԼԷ Հ08 ՆԱՐ

Կուլէ հօյ նար, հօյ նար,	Կուլէ չորս կօշէն արծըթուն է,
հօյ նարէ,	Կուլէ հօյ նար, եւլն.:
Կուլէ հօյ նար, հօյ նար,	Կուլէ աղբէր աղբէր ես քէ շուն,
հօյ նարէ:	Կուլէ հօյ նար, եւլն.
Կուլէ նախիր տանիմ էլլամ ծառ,	Ի՞նչ ես բարձեր քո իշուն,
Կուլէ հօյ նար, եւլն.:	Կուլէ հօյ նար,
Կուլէ խնձոր թալիմ էկո տար,	Կուլէ խունկ ու հինան ու
Կուլէ հօյ նար,	աբրշուն,
Կուլէ խնձորի կէս հասուն է,	Կուլէ հօյ նար, եւլն.:
Կուլէ հօյ նար,	Կուլէ կալն էղաւ էրկու էրես,

Կուլէ Հօյ նար, եւլն. Իմ եարս հետղի բերես :
Կուլէ բազրկան Աստուած սիրես, Կուլէ Հօյ նար, Հօյ նար,
Կուլէ Հօյ նար, Հօյ նարէ :
Կուլէ երբ որ Հալապէն կի դաս, Կուլէ Հօյ նար, Հօյ նար,
Կուլէ Հօյ նար, Հօյ նարէ :

ՀՕՅ ԽԱԽՈՐ(3)

Հօյ նանօր , նանօր , Հօյ նանօր , նանօր
Հօյ նանօր , նանօր , Հօյ նանօր , նանօր :

Գիշերուան լուսին, ցերեկուան արեւ,
Էկուը պազնեմ աչքերուդ վերեւ,

Կանչեմ եար խըռով մի կենար,
Դուռնէն ու աշխարհ մրգի չի մրնար:

Սէլեր եկած ին ակներ է տօղերով,
Սիրեր իմ կ'առնիմ սուրմա պեխերով :

Սէլեր էկած ին ակներ է շուշա,
Սիրեր իմ կ'առնիմ շորերն է չուխա:

Ծառէն է կախուեր տըսուերկու աթոռ,
Սիրեր իմ կ'առնիմ թագաւորի թոռ :

Աղջի խորոտիկ,
Մը քէլի բողիկ,
Սօլ կռնոց մօտիկ,
Փուշ, կ'էղնալ տոտիկ:

Կը բերիս օսկի, չըմ կայնիր խօսքիդ, Զըս բերիր օսկի, չըմ կայնիր խօսքին:

Կը բերիս նուռը, կը կայնիմ դուռէ,
Զբս բերիր նուռը, չըմ կայնիր ուռը.

ինձիլիկ եար ջան, ինձիլիկ եար ջան,
կը բերիս մէրջան, քոյ կ'ըսիմ եար ջան:

3) Ակխյայտմի է յիշեալ երգին մէջ զանազան մասերու ներքին յարակցութեան պահասը ու անջատ երգի մասեր ըլլալու հանգամանքը։ Սակայն բանահանքի մեր դերին մէջ ըլլալու մտադրութեամբ, կու տամբ ինչպէս որ մեզի տանը ուղարձ է։

Թալեր իս թամազին,
Կայներ իս մուբազին:

Եկուր գիրկ ու ծոց մըջ բալայ խոտին,
Եկուր գիրկ ու ծոց մըջ նըխշուն օտին,
Եկուր գիրկ ու ծոց, ջահնամ' օրօրոց:

ԼԵՅԼԻ ԽԱՆՔ

Տընէն էլար ալ կապեցիր,	Տընէն էլար ալաշ-քուլաշ,
Քու բարակ մէջ շալ կապեցիր,	Մըներն ի ծոց բամպկի քուլաշ,
Լէյլի, լէյլի, լէյլի խանէ,	Լէյլի, լէյլի, եւլն.:
Լէյլի, լէյլի, նազի խանէ:	Արտ մը դարի տամ խիարի,
Տընէն էլար էրի պէրի,	Ճամբիմ իմ եարոջ տիարի,
Քէ կը կանչին որբեւէրի,	Լէյլի, լէյլի, եւլն.:
Լէյլի, լէյլի, եւլն.:	Լէյլի, լէյլի, լէյլի խանէ,
	Վըր կարմընջին ցորեն ցանէ:

ՀԱԲԼԲԱՆ

Հարլբան քաշքա ես նալպանտ	Ուռուսի սալտատ ըլլիմ,
ըլլիմ,	Հարլբան, ջանէ ջան,
Վերի շուկէն պանտ ըլլիմ,	Սինամ սարեր քէ ղուրպան:

ՏԷՐԼՔՅՈ

Տէրլքօն ելաւ կ'երթայ էղին,	Կըպեր ին իրարու հօր տին:
Ինքն ու ուր ջուխտակ տէպերկին,	Տարբերակ.-
Սօւեր հագան իջան էղին,	Տէրլքօ արտեր բալայ փուշ էր,
Ո՞ւր է մըր հերուան խիան դին,	Գեղի միջի եարն անոյշ էր:

Սասունցի Խումարէն հաւաքուած, Հալէպ, 20 Սեպտ.ի, 1951ին:
Խումար Շարոյեան՝ Կուսգեղցի (Սասնյ շրջան), հօր անուն
Սարգիս, մօր անուն՝ Խուպար: Շրջան մը ապրած է Հազրո գիւղա-
խաղաքը, ապա գաղթած է Հալէպ: 1951 թ.ին 63 տարեկան էր եւ
լը բնակէր Հալէպ:

ԽԱԹՈՒԻՆ ՍԿԵՍՈՒԻՐ

Խաթուն սկեսուր, խաթուն	Խաթուն սկեսուր, խաթուն
սկեսուր,	սկեսուր,
Խրատ մը տուր քու ծուռ տղին,	Խրատ մը տուր քու ծուռ տղին,
Զերթայ պառկի ձիու մըսուր,	Զերթայ պառկի բարակ մէջկուն,
Բոլոր էրսէն, սեւ աչերուն	Դուրան ճակտին ի՞նչ էր խըսուր:
Ի՞նչ էր խըսուր:	

ՀԱՅ ԿՈՒԼԻՉԱՐ

Հայ կուլիղար, լայ կուլիղար, Քելէ տեսնանք զմըր եարեր :
 Շէկչէկ մազեր, նիշուն մէզար,
 Թու պապու աշուխն քոռնէր, Զուր մը թափի վըր քարերուն,
 Զհանէր գըզգի գինու պազար : Զըլայ Դանօն կը պաղընկի
 Զուր մը կ'իդէր բանձրիկ սարին, Կը Հորքըրի վըր իմ չոքերուն,
 Կու կաթկթէր մարմար քարին, Խուլիքին կ'ընկնի մըջ քոջերուն :

ՊԱՐԵՐԳ.

Տանէն էլայ տանքով գացի, խորոտիկ,
 Սալվար տուն չէր նստայ լացի, խորոտիկ,
 Սալվար գացի բաղնիք լուաց, խորոտիկ,
 Ուր գուլսի լաջան մանցի թաց, խորոտիկ,
 Ուր չող ու մող ծոցերն է բաց, խորոտիկ,
 Տղան տեսաւ խելաց գնաց, խորոտիկ :

Վերեւ մըր տան առուն հանած, խորոտիկ,
 Ներքեւ մըր տան առուն հանած, խորոտիկ,
 Շուրջ ու բոլոր ոեհան ցանած, խորոտիկ :

Վերեւ մըր տան բուռ մը տանձի, խորոտիկ,
 Ներքեւ մըր տան բուռ մը տանձի, խորոտիկ,
 Մըխս Յակորի մուրուք խանձի, խորոտիկ :

Վերեւ մըր տան բուռ մը հըցի, խորոտիկ,
 Ներքեւ մըր տան բուռ մը հըցի, խորոտիկ,
 Մըխս Բօլոյի մուրուք խանձի, խորոտիկ,
 Ուզեցի Խըմլօն չտուեց ընձի, խորոտիկ :

ԳՈՎԵՐԳ.

ՏԵՐԼՆՏԵՍ

Բոլոր էրես կրծիկ ջանայ,	Տէրընտես, տնտես,
Աղջիկ չէր քու լու մանա,	Ֆըթըլըն տես,
Յոյս կ'էնիմ Երուսաղէմ,	Հացու կէս,
Ճամբան կ'էրթէր Արապըսթանա,	Դարման կէս,
Սեւ մազեր զըրկի զգօտին,	Դատաստան չելնես սեւերես :
Կու մտնէր ճուխ ոէհանա :	

Մշեցի Աստմէք Օհանեանէ հաւաքուած, Հալէպ, 20 Օգոստի, 1951-ին:

Աստմէք Օհանեան՝ Մշոյ Դաշտի Գոմս գիւղէն: Հօր ամսամ՝ Ճերթօ: 14 տարեկանին զաղբականութեան հանուած: 1951 թ.ին 50 տարեկան էր: Կը բնակէք Հալէպ:



ՍԻՐԵՐԴ

Զաղցի թեւեր պոքէ է,
Աղջիկ տղին հոգի է:

Զաղցի դոներ տաշուկ է,
Խալամ վրայ քաշուկ է,
Աղջիկ տղին խարուկ է: (4)

Աւայ Մուրաս քըզի մըզի,
Ախ սուրբ Սարգիս մընիմ քըզի,
Քու ծոցով թասով ջուր տուր
ընծի,
Կալ ու կտէն բրծնամ՝
կ'առնիմ զքըզի:



Զաղցի թեւեր աւազ է,
Աղջիկ տղին մարազ է:
Զաղցի բոլոր կամար է,
Աղջիկ տղին համար է: (5)

Աղջի տընաւեր էկօ էրթանք
թիլու ճամին,
Ես քէ կանչիմ դուն ըսէ ամին:

ՕՐՈՐ

Վալայ կ'առնիմ Զէլոյի քուր,
Էրթամ Բաղէշ բերիմ նուռ,
Տանիմ զարկիմ ժամու դուռ,
Ամէն նոին պագ մը տուր,
Չեղաւ մեծ քուր, թըղ էղնայ
պղտիկ քուր:

Օրօր էնիմ հըտ օրոցին,
Ծծիկ իտամ գըրկանոցին:
Օրօր էնիմ քընացընիմ,
Դուն պղտիկ իս մեծացընիմ:



Աշուն է թողին քոչեր,
Դարուն է նախշուն պոչեր:

ՊԱՐԵՐԴ

Սար սար, ես սարերու ծաղիկն իմ,
Ճան ճան, ես լեւոնի քուրիկն իմ.
Տո՛ւն արի, տո՛ւն արի, տո՛ւն աղբէր,
Արի՛, իմ խորոտ աղբէր:

4) Խնուսցի Գարեգին սոյն բառը կ'ուզէ փոխարիմել մաշուկ է բառով, որ ո՛չ միայն իմաստիմ խոտոք չի համեմատիր, այլ մատու կը դառնայ նոյնայն սաշուկ է եւ մաշուկ է-ի ենու:

5) Սոյն վերջին երկատողը գրի տառած ենք խնուսցի Գարեգիմէ:

Սար սար, ժամի դոնէն դուրս էլայ,
Ճան ճան, արեւի պէս լուս էլայ.
Տուն արի, եւն . :

Սար սար, հաց իմ թխեր փրփրի,
Ճան ճան, վատ խօսողը դրդոի.
Տուն արի, տուն արի, տուն աղբէր,
Արի', իմ խորոտ աղբէր :

ՇՈՂԵՐ ՃԱՆ

Շօրօրա', շօրօրա', Շողեր ճան,
Ամպել ա ձուն չի գալիս, Շողեր ճան,
Դուն օրօրա, դուն շօրօրա, Շողեր ճան,
Ամպի տակէն ձուն կ'երեւայ, Շողեր ճան :

Միրտս կրակով լեցուած, Շողեր ճան,
Մթնել ա տուն չի գալիս, Շողեր ճան
Դուն օրօրա, դուն շօրօրա, Շողեր ճան
Ամպի տակէն ձուն կ'երեւայ, Շողեր ճան :

ԳԱՐԵԲԳ

Էլայ տանիք տափ քալեցի,	Կապեր վրէն խանչալ ու թուր,
Լանկէն գըրկի էրդիկ բացի,	Գացեր կայներ Գոհարի դուռ,
Լալէն տուն չէր, նստայ լացի :	Գոհա՛ր, Գոհա՛ր, աղջիկդի տուր :
Լալէն գացեր գետն ի լուաց,	Զօրով կի տաս, խաթրով
Տաշտեր կոտրաւ ջրեր գնաց,	կը տանիմ,
Ապտալ աղի շորեր մնաց :	Կոռուի կոճով դուռ կը ծեծիմ,
Ապտալ աղա, ապտալ ու ծուռ,	Շամիր տառնով հարս կը հանիմ :

ՏՈՒ ՏՈՒ

Տու տու, տու տու, Մշեցի,	Աղբէր, աղբէր ես քէ շուն,
Պուտկով վլաւ էփեցի,	Խունկ ու խընէն ապրշուն.
Տարայ տուի հովիւին,	Իմ թամաքէն ձին տուէք,
Հովիւ տուաւ ինձ գառ մի.	Հեծնիմ երթամ եղիշէն.
Գառ տարայ տուի Աստըծուն,	Եղէն ինձ ճաշ եփեր է,
Աստուած տուաւ ինձ աղբէր :	Դըգալ գըգալ ցըւրեր է,

Դըղալ մը ինձ պահեր է ,
Օսկի ունառուկ դըրեր է ,
Օսկի կատուն կերեր է :

Փշտայ փշտայ փշտմանի ,
Առուէ առու թըռուցի ,
Քառուն կաքաւ բանեցի :
Առայ բերանս լեղի էր ,

Թըռուցի գետին գինի էր .
Գինի գինի գինըստան ,
Աղբէր մ'ոնիմ Զինըստան ,
Զինարներու հետ շուր կ'իգէր ,
Ռոր շորերէն հոտ կ'իգէր ,
Լուի լուի չխտըկեր ,
Վարդի ջըրով կ'իստըկէր :

ԱՂՋԻՔ

Զորս դլուխ Աւետրան ,
Ութ դլուխ Սաղմոս ,
Սուրբ Գրիգոր Նարեկացին ,
Պահես ու պահպանես ,
Խաչես ու խաչակնքես ,

Անուն հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սըրոյ , ամէն :

Ճրադ ճրադ ճշմարիտ ,
Ճշմար խաթուն մարտիրոս ,
Իմ սիրելի Քրիստոս :

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Փշի փշի բանբուզա ,
Ապըլպըմէ սանտուզա ,
Ես պարոնի տղէն իմ ,
Թաղաւորի փեսէն իմ :
Տառւ տառւ տաստանա ,
Կուկլուլու լու բարիլուս ,
Մըր ճետ խօսաւ տապաղանէն ,
Ինչ կէր կտուց խունկն ու խանէն :
Խարս պառկաւ բերաւ լաճ ,
Անուն դրին քարէ խաչ ,

Բղբոջ բաղարջ՝ Սղերդու փարչ :

Ինէ մինէ մանեմակ ,
Պասէ լանէ աղըլըստրակ ,
Է ու պէ , արգոյ բարքօ ,
Վի վօ վակ :
Ինա մինա օճիտինա ,
Շամա խազի կաթըր կաճի ,
Ապըլպընի չըխտի տըլի :

ՄԱՆՈՒԿ ԽԱՂՑՆԵԼՈՒ ԽԱՂ

Հար ցցում ,
Մեղը ու կարադ ,
Գնա մտիր պապու մարադ ,
Կեր մեղը ու կարադ ,
Վաղէ էկուր :

Աւ ու ալուան իս հագեր ,
Կարմիր լաջայ իս կապեր ,
Ինձ ասա գլխիդ մատաղ ,
Պինի շըտովդ ով կարեր :
Աղբէր ջան քէ դուրբան ,
Մըր կողմանէ դու իս , դու :



Ճուրիկ ճուրիկ, թառ ճնճղուկիկ,
Թոռաւ դնաց երրւաղէմ,
Բուրդ բերաւ բամպակ չըերաւ,
Շալ ըրաւ շըլվար չըրաւ,
Իմ Գէորգին չըլվար չըլվար:
Պեխերդ օլորեր իս,
Տուշմընի դէմ կայներ իս,
Թուրդ մէջքդ կապեր իս,
Կալոշ բոթինդ հազեր իս:
Աղքէր ջան քէ դուրբան,
Մըր կողմանէ դու իս, դու:

Մշեցի Ալմաստէ հաւաքուած, 20 Օգոստ.ի 1951-ին, Հալէպ:

ՕՐՈՐ(6)

Իուրիկ էնիմ աղբօրորդին՝ տան օրդին,	Իուրիկ էնիմ աղբօրորդին՝ ծծի որդին,
Թուրոջ օրդին էր շանօրդին:	Թուրոջ որդին, վերի աղանին ծծիկ կ'իտայ,
Իուրիկ էնիմ աղբօրորդին մըջ օրոցին,	Հարաւ քամին օրօր կ'էնէ, Սեւ օձկըներ քընիկ կ'իտան:
Թուրոջ որդին մըջ խոլորսին:	

Մատւեցի Խարգոյեն հաւաքուած, 20 Սեպտ.ի, 1951-ին,
Հալէպ:

Խարզօ Հոքոյեան՝ Մասնյ Տալտրիկ շրջանի Սպաղանի գիւ-
դէն: Հօր անուն՝ Գրիգոր, մօր անուն՝ Ռեհան: Տանըմէնկ տարի ա-
շակերտած է Մշոյ Ս. Կարապետի վանքին եւ Մատնավանքին: 1913
թ.-ին գաղթած է Հալէպ, ուր կը բնակէր 1951 թ.-ին 65 տարեկան
հասակին:



Մըռնիմ քըզի Ս. Յովհաննէս,	Մեռնիմ քըզի խաթուն կեսուր,
Դունապան էջի չոքերու կէս,	Քու տղեկան խրատ մը տուր,
Զօրով պուղտան կապած վրէս:	Վարդան պառկի հորթու մըսուր:

6) Յիշեալ օրօրի մասին մեզի Տիկ. Ալմաստ պատմեց հետագայ գրոյցը,
որ իր շահեկամուքեամ համար կ'ուզեմի եռու Ակարագրել: Ասեմօք աղջիկ մը ու-
րիշ գիւղ մը հարս կ'երթայ եւ եղբայրը կու գայ զիմիք դարձ տանելու համար:
Ճամքան աղջիկը յափ կ'ըլլայ, սակայն կ'ամշեայ բամ մը ըսելու: Եղրօք կ'բաւ
սպասէ, խոլորսներու մէջ երթամ ու գամ: Կ'երթայ խոլորսներու մէջ եւ հան
Աստուծոյ հրամանով տղայ զաւակ մը կ'ումենայ: Խոսներուն տոկ պահելով կու
գայ եղրօք մօտ առանց բամ մը ըսելու: Մանուկը առանձին կը մնայ խոլորսին
տակ. աղաւմի մը իրեն կաք կու տայ, հարաւ համբ խոլորսին տերեւմերը կ'օ-
րօքէ եւ սեւ օճերմ ալ կը բնացնեն զայն: Եղբայրն ու բոյրը մամքան շարու-

ՊԱՐԵՐԴ

Զըմ ու չըմ, չըմ կրնայ խաղայ, Մայրամ էկաւ Խըլաթէն,
Բոպիկ իմ, օտըս կը ցաւայ: Կարմիր էրես կը կաթէր,
Զըմ ու չըմ, չըմ կրնայ խաղայ, Պագ մը տուր Աստծու խաթէր,
Ախօթի փորըս լէ կը ցաւայ: Կանաչ ու կարմիր Մայրամ:
Դա նա նայ, նա նա, նա նա նայ, Յարդերտու սար խըճերով,
Դա նա նայ, նա նա, նա նա նայ: Մայրամ նխշուն բըճերով,
Սարեր ու ձորեր ձուն կ'իգէր, Յարդերտու սար հերկ ու եղ,
Մայրամ տաճկին դուր կ'իգէր. Մայրամ կ'ըմընի հալուկ եղ:
Հա Մայրամ, Մայրամ, Մայրամ, Հարաւ քաֆուր ու քամին,
Կանաչ ու կարմիր Մայրամ: Էտանազօլայ ջուխտակ ամին,
Էտանազօլայ ջուխտակ ամին:

Պիքլիսցի Սոփիկ Մկրտիչեանէ հաւաքուած:

Սոփիկ Մկրտիչեան՝ Պիքլիս քաղաքացի: 1951 թ.ին 70 տարեկան էր եւ կը բնակէր Հալէպ:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵՐԴ

Գետն էկաւ կոճ էրեր,	Ճրագն ի դուռ կը վառէր,
Մըր հարս պառկաւ լաճ էրեր:	Տուշմընի դուռ կը պատռէր:
Սար մը կար Հընտայ քաղաք,	Հարսեր էլան մեծ բաղնիքէն,
Ճուղն ա տուեր քաղքէ քաղաք,	Պագ մի առայ շող էրեսէն,
Ամէն ճուղին ջուխտակ ճրագ:	Խնձոր թափաւ ծոց ու ճեպէն:

Մշեցի Անգինէկ հաւաքուած:

Կաթէ աղբուր, մոմէ տաճար,	Մըսո Արոյի եղ մըր ցցում:
Ես էնիմ Աստծու ճար,	Դոստ մը ունիմ Պուլանուխ,
Աստուած էնէ զիմ հոգու ճար:	Կարմիր էրես աչքեր թուխ:



Ցցում, ցցում, ցցում,	Գացի կանայ գոմու դուռ,
Տանիմ բերիմ զըմբըցում,	Մաքին ծնաւ բերեց ուլ:



հակեռակ կը հասմին տուն ուր ժամանակ մը եսք եղբայրը տղայ զաւակ մը կ'ունեմայ: Քոյքը միշտ կ'օրօրէ իր եղբօրսրդւայն օքքամը եւ կ'երգէ յիշեալ օքքը: Հարց կու տամ իրեն քէ ի'նչ է խօսերան իմաստը, կը պատմէ եղելուքիւմը եւ կ'երբան կը գտնեն մանուկը, որ ողջ էր մնացած քամի մը տարիէ ի վեր:

Տալիլօ, տալիլօ, սէյրանէ
Տալիլօ, տալիլօ, սէյրանէ
Քօթիէ մէրէ հայրանէ:

Նէնէ, նէնէ, նիննայէ,
Տըլօ տանկէմըն նայէ:

Քար մը թալիմ կը ցոլայ,
Ինչ պլպուլի կը խօսայ:

Յովան լուսին լուսով էր,

Շան աղջիկ շատ քէսով էր:

Երթանք Աւրան,
Քըշտինք տաւրան:

Աստղ մը ինչպէս կը ցոլայ,
Քընց պլպուլի կը խօսայ:

Մազէ կարմունջ անցնելու,
Պաշար չկայ տանելու,
Աստծու ջուապ իմ տալու:

Հաւաքուած զամազաներէ:

ԿԱՏՈՒԻԻ ԳՈՎԱՆՔ

Փշիկ, փշիկ բանպուղիկ,
Ապրշըմէ սանտուղիկ,
Ես բալուլայ տղէն իմ,
Թագաւորի փեսէն իմ:

Զուր բրծի սարէն կ'իդայ,
Մանտր մանտր քար կ'իդայ,
Զիր ու չամիչ հետ կ'իդայ:

Սարու տակի պաղ աղբուր,
Օսկէ թաս, արծըթէ ջուր,
Մէկ դու խմէ, մէկ ընծի տուր:

ԱՂՋԹՔ

Կուս Մարիամ դու կուս իս,
Հողով սրտով դու լուս իս,
Լուսէ քամար իս կապի,
Քու հոգին մըզի համար իս բերի:

ԱՆՔԾՔ

Տէր Զաքարէն, Մարգարէն,
Կոլանի տղէն, Թութկայ Միէն,
Ժամ կարդայ Խրսուկ Վարդան,
Հալածիմ թփոխ, օրշնիմ սփոխ,
Թալիմ աղէս՝ գրգռիս:

Բ Ա Ռ Ա Բ Ա Ն

Բալայ խոտ – խոտի տեսակ մը
Բէն – ուս
Բինուկ – կարկումուած
Բոլոր – կոր
Բուճ – գուլպայ
Բրծնալ – ազատիլ
Գումել – հաւաքել
Դոգոիլ – վառիլ

Դեղել – հինայել
Դումպան – շապկընկեր
Դուրան – հարք
Եազար – կը գրէ
Զիւան – որով
Էմել – ըմել
Էրած – երազ
Թաժայ – քարի

Թալել - նետել	Մալուլ - տիսուր
Թիպուր - փետուր	Ուր - իր
Թերմաշ - 1) անտէր, 2) կիսամաշ	Ուրին - իրեն
Թուման - քռչող	Չախու - դահակ
Իգալ - գալ	Չայիր - արօտառեղի
Խմալ - ինչպէս	Չըռոր - չըռզուց
Խառըկել - մաքրել	Պանու - քումբ
Խոսումա - վրայ	Պաշ - զլուխ
Լակլակ - արագիլ	Պառիկ - կռնակ
Լամկարի - խոշոր ափսէ	Զահուտ - փողոց
Լիլ - կակուղթալ, հալիլ	Զուապ - պատասխան
Խալամ - մատիտ, գրիչ	Զրըթալ - իշնալ
Խանու - քարացած շաքար	Ռըսխ - բախտ
Խշիմ - անփորձ, համբակ	Սալտառ - զինուոր
Խոջ - արու ոչխար, խոյ	Սկիլ - սուզալի
Խուալէ - կոնաճեւ տանիք	Ցըրել - ցրուել
Խոսուր - քերի	Քամար - գոտի
Կանք - կոր	Քըռոց - կարը մէջը կրելու աման
Լամկիչ - գործիքի տեսակ մը	Քոռինալ - կուրթալ
Կալոշ բորին - կօշիկի տեսակ մը	Քուլաշ (կուլաշ) - գուեմարտ
Կօշէ - անկիւն	Օքրոմըշ - նոսած
Հասրաք - կարօս	Օքշենել - օքհենել
Ճետ - աֆաղաղ	Ֆայտա - օգուտ
Ճիծ - երախայ	

THE POPULAR SONGS OF TARON

ARDASHES DER KHATCHADOURIAN

The folklore of the Armenian people is quite rich. The literary gleanings of the last hundred years has saved much of the oral creative literature of the Armenian people who have expressed in it their character, daily life and progress through thick and thin. A collection of the popular songs of the world of Taron has been made possible through the personal contribution of the Taron inhabitants — Karekin Mgrditchian, Aznive Sevoyan Khoumar Sharoyan, Assanet Ohanian, Kharzo Hotoyan, Sofig Mgrditchian, and Almast —, who barely escaped the massacres of 1915 and took refuge in Syria. A. Der Khatchadourian collected these fragments in the year 1951.